Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան Ժամանակը՝ 180 րոպե

Տունը որտեղ ծնվել է ավստրիացի հանրահայտ ***երգահանը*** Ֆրանց Շուբերտը գտնվում է Վիեննայից ոչ հեռու ***ծաղկաթփերով*** գոտևորված հինավուրց մի բնակավայրում:

Ֆրանցի երգարվեստի հանդեպ բուռն սերը նաև ***բացառիկ*** ընդունակություններն այնքան ակնհայտ էին որ վեց տարեկան մանուկը պատրաստ էր օրվա մեծ մասը անցկացնելու երաժշտանոցում:

Տարիներ անց արդեն հասուն Ֆրանցը ազատ ստեղծագործելու համար վարձեց փոքր մի սենյակ և որոշեց առանձնանալ ***ընտանիքից:*** Չափազանց աշխատասեր էր արթնանալով ***վաղորդայնի*** առաջին շողերի հետ իսկույն սկսում էր ***ստեղծագործել*** մինչև մարմինն ամբողջովին ձգվում էր մատները ընդարմանում: Քնելիս ակնոցը շատ հաճախ չէր հանում որ արթնանալուն պես անմիջապես ***թղթին*** հանձներ մտքում ծնվող մեղեդիները: Հպարտ ինքնամփոփ նաև ***գաղտնապահ*** էր ընկերները տեղյակ չէին նրա ոչ հիվանդության ոչ էլ անգամ հացի գումար չունենալու մասին: Այդուհանդերձ Շուբերտն աշխատում էր ***գիշերուզօր*** չնայած առողջության օրեցօր վատթարանալուն:

Մի անգամ սենյակ ***մտնելիս*** ընկերները նկատեցին որ Ֆրանցը նոտագրված մի թուղթ նետեց աղբամանը: Տղաներից մեկը բոլորից աննկատ վերցնելով թուղթը որի վրա գրված էր «Ավե Մարիա» դրեց գրպանը:

Հաջորդ կիրակի պատարագի օրը Շուբերտը գնաց եկեղեցի: Ներսում խորախորհուրդ լռություն էր և հանկարծ հնչեց հոգեպարար մի մեղեդի: Շուբերտի սիրտը թրթռաց չէ որ դա Տիրամորն ուղղված մեղեդին էր որի նոտագրումն ինքը երկու օր առաջ նետել էր աղբամանը:

Գաղտնիքը իհարկե շուտով պարզվեց: Տիրամորը փառաբանող ամենաշքեղ երգը շնորհիվ Շուբերտի ընկերների դարձավ մարդկության թանկարժեք նվերը:

1. Կետադրի՛ր բնագիրը: (5 միավոր)
2. Նշի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (5 միավոր)
3. Բնագրից դո՛ւրս գրիր 10 դերբայական դարձված՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը, դերբայի անվանումը: (5միավոր)
4. Բնագրից դո՛ւրս գրիր մակբայները, նշի՛ր տեսակը: (5 միավոր)
5. Բառակազմորեն վերլուծի՛ր բնագրում գործածված ***ընդունակ, հինավուրց, ընտանիք, թանկարժեք, վաղորդայն, խորախորհուրդ, առաջին, բացառիկ, առողջություն, հասուն*** բառերը՝ ընդգծելով արմատը մեկ, ածանցը երկու գծով: (5միավոր)
6. Գրի՛ր **սակավապետ, ճամարտակել, նկրտում, առաթուր, մուճակ, վեհերոտ ձաղկել, պնակալեզ, ասպազեն, խանդաղատանք** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակազմությամբ: (5միավոր)
7. Ընդգծի՛ր այն բառերը, որոնք կարող են բառակապակցություն կազմել կամ գործածվել ***պատանի*** բառի հետ. տամուկ, նպատակամետ, սարսռուն, դյուրաբորբոք,սրտմաշուկ, աննկուն, հպանցիկ, քմահաճ, բարկ, նրբանկատ, կերկերուն, խոհուն, դյուրին, քննախույզ, տարտամ, մարդախույս, շինծու, հանդուգն, հարմարավետ,միօրինակ, հաշվենկատ, լռելյայն, վհատ, բորբ, թախծախառն: (5միավոր)
8. Մեկնաբանի՛ր ***Կայենի խարան, Ռուբիկոնն անցնել, Հուդայի համբույր, տրոյական ձի, կաթիլը քար է ծակում*** *թևավոր խոսքերը:* (5միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Քո պատգամը հղի՛ր աշխարհին» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)